# ԸՆԹԱՑԻԿ ԳՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

**N 1**

ք. Կապան «15» հունվարի 2020թ

*ՀՀ Սյունիքի մարզպետարանը ի դեմս գլխավոր քարտուղար է. Մարտիրոսյանի*, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ (այսուհետ՝ դրամաշնորհ տրամադրող),, մի կողմից և «Կապանի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ը ՝ ի դեմս տնօրեն Վ.Արզումանյանի, որը գործում է ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ դրամաշնորհ ստացող), մյուս կողմից, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 26.12.2019թ թիվ 1919-Ն որոշումը կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1.Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրով Պատվիրատուն Կատարողին պահպանման ծախսերի համար հատկացնում է 3773.3 հազ. /Երեք միլիոն յոթ հարյուր յոթանասուներեք հազար երեք հարյուր / ՀՀ դրամ , այդ թվում ԱԱՀ-ն՝628.9 հազ.դրամ :

## 2.Գումարը տրամադրելու և ծախսելու կարգը

2.1. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան :
2.2.Կատարողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան և ապահովի սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված նպատակների իրականացման հետ կապված փաստաթղթերին ծանոթանալու՝ Պատվիրատուի ներկայացուցչի հնարավորությունը:
2.3. Սույն պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո Պատվիրատուն սույն պայմանագրի 1.1. կետում նշված գումարը ըստ հավելվածի փոխանցում է Կատարողի գանձապետական հաշվին:

## 3.Հաշվետվությունը

3.1. Հաշվետվությունը ներկայացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 4. Այլ դրույթներ

4.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 25.12.2020թ.:
4.2.Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ , որը կնքվում է գրավոր:
4.3. Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 5.Կողմերի իրավաբանական հասցեները

| Դրամաշնորհ տրամադրող | Դրամաշնորհ ստացող |
|---|---|
| ՀՀ Սյունիքի մարզպետարան | «Կապանի Մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ |
| Ք.Կապան Նժդեհի 1 | Ք. Կապան |
| ՀՀ ֆին.նախ. գործառն. վարչ | ՀՀ ֆին.նախ. գործառն. վարչ |
| հ/հ 900311144027 | հհ 900318000313 |
| հհվհ 09415375 | հհվհ 09409013 |
| Ս.Մարտիրոսյան | Վ.Արզումանյան |